

«Յորժամ փախստական ուխտաւորքն ընդ քերճիմանաց, չար սովորութենէ եղեալ որ առ պաշինք բան կու խնդրէն ի քերճիմանացն և տան, ի թուին ՌՄԻԴ (=1774) զարձեալ ժէ (17) ոսկի միջնորդին և թէ ոչ ունիցի միջնորդ՝ և (5) ոսկի առ պաշուն, և (7) զօրօրայ սայի պաշուն՝ Գ (3) զօրօրայ քիւփիզնոց օտապաշուն տան, զայս վերողրեալքս ուխտաւորաց քերճիմանին ի միջի իւրեանց ժողովին և տան, և ոչ թէ ուխտաւորքն տան»:

«Ի թուին ՌՄԻԶ (=1777), և յուլիսի ԻԶ (26) ին Յատում օղու Մէհմէտ փաշան Տեղիի եկաւ սուրբ քաղաքս յերուսաղէմ, և յուլիսի ԻԹ (29) որ օրն է չարաթ բազում կաշառ էառ Յոանկաց մեր Փրկչայ գերեզմանատունն առեալ ետ նոցա մասն ինչ»:

«Ի պատրիարքութեան տեառն Յովակիմայ ՌՄԼԲ (=1783) թուին, և սեպտեմբերի Է, վիճիլ Գարբիէլ վարդապետ վաղձանեցաւ Դ (4) տարի վիճիլութիւն արար»:

«Յետ նորա Եղովկացի Մարտիրոս վարդապետ Ա. տարի վիճիլ եղեաւ իւր կամաւն ելաւ գործոյն»:

«Յետ նորա Բերկացի Գէորգ վարդապետն ևս Դ (4) տարի արար վիճիլութիւն, և ի ՌՄԽԱ (=1792) թուին և սեպտեմբերի Գ (3) ին վաղձանեցաւ. տէր լուսաւորեսցէ զհոգիին»:

«Եւ ի սոյն թուոյն և սեպտեմբերի Ժ (10) ին նստաւ վիճիլ Եղովկացի լուսարար Պետրոս վարդապետ ՌՄԽԵ (=1796), մայիսի ԻԹ (29) ին, ելաւ վիճիլութիւն իւր կամաւն: Նա ևս նոյն թվոյն և յունիսի Ա. ին նստաւ վիճիլ՝ Զմբէկէզէզի Պետրոս վարդապետ՝ սա ևս վասն հարկաւորութեան Ալըրոյ Աթոռոյս՝ յղեցին ի մեծն Պօլիս ՌՄԽԹ (=1800) թվին և նոյեմբերի ԺԶ (16) ին: Սոյն օրն իւր տեղն վիճիլ կացոյց Մարաշի Կիրաճոս վարդապետն: Ի ՌՄԻԲ (=1803) ին և հոկտեմբերի Ա. ին մեր վիճիլ Պետրոս եպիսկոպոսն ընդ Պօլսոյ տէրունական ուխտաւորացն եկեալ՝ նոյեմբերի Բ. ին կրկին վիճիլ կարգեցին»:

«Ի ՌՄԿԱ (=1812) և մարտի Ա. ին ուրբաթ օրն Է (7) ժամուն Զմբէկէզէզի վիճիլ Պետրոս հայր սուրբի վերայ ճամյա իջաւ՝ որ ոչ ևս կարաց խօսիլ, հագիւ սրբութիւն հառն, մինչև չորեքշաբթի օրն չորս ժամուն հանգեաւ առ Տէր, և եղաւ ի մէջ

Սբ. Փրկչին որոյ տէր լուսաւորեսցէ զհոգիին»:

«Յետ սորա և ՌՄԿԱ (=1812) ին Տէրէվանքի Պետրոս հայր սուրբն եղեալ վիճիլ, մինչև ի ՌՄԿԲ (=1813) և մարտի 22. սա ևս առ Աստուած փոխեցաւ. Տէր լուսաւորեսցէ զհոգիին»:

«Յետ սորա ի ՌՄԿԲ (=1813) և մայիսին Եղովկացի Ստեփաննոս վարդապետն ի նուիրակութենէ եկեալ եղեալ վիճիլ: ՌՄԿԴ (=1815) նոյեմբեր Ա. Գարբիէլ հայր սուրբն վիճիլ նստաւ: Ի ՌՄԻԹ (=1810) և դեկտեմբերի ԻԶ (26) ին սուրբ Ստեփաննոսի տօնի օրն, մեր Յակոբ հայր սուրբի վերայ ճամյա իջաւ աջ կողմն. բարեւարն աստուած ինքն այց արասցէ»:

«Ի ՌՄԿԱ (=1812) և յուլիսի Զ (6) ին առ Աստուած փոխեցաւ, նոյն օրն ևս գրեւեպան մանճեպի Դանիէլն հանգեաւ առ Տէր, որոց զհոգիան նշունց Տէր լուսաւորեսցէ»:

«Ի ՌՄԿԲ (=1813) և մարտի Թ (9) կիրակի գիշերն Զ (6) ժամուն Տէրէվանքի լուսահոգի Պետրոս եպիսկոպոսն առ Աստուած փոխեցաւ որոյ հոգին Տէր լուսաւորեսցէ՝ նախ Պօլիս յետոյ սուրբ Երուսաղէմ վիճիլութիւն արաւ»:

Վերի արտազրութեանս ամբողջ ընթացքին կային մէջ ընդ մէջ պարսպ թուած միջոցներ նաև ամբողջ էջեր:

Յ. ԲԻԻՐՏԵԱՆ

“ԱՅԱ ՄԱՐԴԸ,”

Խաչկութեան պատկերին առջև

Նաեւ մը խաչեր Գողգոթայի վրայ ցցուած,
Որոց մէջեղ պիտի խաչուէ՛ր Որդին Աստուած...
Այդպէս վնուեց՝ դառն առաջ՝ կոյր ամբոխը,
Միամիտին մէջ ճեմեղով իր ռոտիք:

Մինչդեռ աշխարհ եկած էր Ան որպէսզի հէ՛ք
Մարդկութիւնը դարձի բեւեռ սրտակեղե՛ք
’Ի անգիտակցի իր վիճակէ՛ն՝ Նոր Օրէնքին
Պատգամովն ու օրհնակովն իր սուրբ կեանքին:

Այսպէս է միշտ երբ քաղաքին հրգոյր խափն
Կը գերիշխէ աշխարհաւ ամբոխներուն
Չեւապաւս եւ խաւարակառ ուղեղներուն:

Այսպէս է միշտ երբ լուսաւոր Գաղափարին
Տարածիլը կ’աւաթ ամէն արուեստական
Ու այլամեծ փաստաբանութիւն ցոյցեցական...:

ՄԵԴՐԻԿ